իրավունքի տվյալ գործով արդյունավետ իրականացման համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը, թիվ ԵԿԴ/3025/02/11 քաղաքացիական գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ին կայացված որոշման մեջ անդրադառնալով Եվրոպական դատարանի վերոնշյալ դիրքորոշմանը, նշել է, որ իրական նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է փաստաթղթային ողջամիտ ապացույցներ ներկայացնի առ այն, որ վնասն իրականում գոյություն ունի, վնասի հատուցման պահանջը չի կարող հիմնված լինել ենթադրությունների, շահարկումների և ապագայում տեղի ունենալիք հնարավոր կամ անհնարին իրադարձությունների ու փաստերի վրա: Անհրաժեշտ նշանակում է, որ պահանջ ներկայացրած անձը պետք է ապացուցի, որ այդ հատուցումն իրոք անհրաժեշտ է իր խախտված իրավունքները վերականգնելու համար և, որ ամենակարևորն է, պետք է ցույց տա իր կրած վնասների ու իր իրավունքների խախտման միջև պատճառահետևանքային կապը: Ողջամիտ նշանակում է, որ վնասի հատուցման պահանջի չափը պետք է համարժեք լինի այդ վնասներին, ինչը հնարավոր է ապացուցել միայն հստակ փաստաթղթային եղանակով՝ բացառելով ենթադրությունները և շահարկումները:

Տվյալ դեպքում «ՋԵՐՄԱԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերության և «Ն.Ա.Ն ԽՈՒՄԲ» ՍՊ ընկերության միջև 04.08.2023 թվականին կնքված՝ իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ Ի-23/05 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրում նշված իրավաբանական՝ փաստաբանական ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների համար, սույն պայմանագրով սահմանված դրույթներին համապատասխան:

Պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով նախատեսված ծառայությունների համար Կատարողին վճարում է 250,000 ՀՀ դրամ հոնորար: Նշված գումարը վճարվում է սույն պայմանագրի կնքման պահին (...):

Դատարանը հիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո հանգում է այն եզրակացության, որ սույն քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցչի կողմից հայցադիմումի, միջնորդության և հայցվորի տիրապետության ներքո գտնվող ապացույցներ ներկայացնելու, գործի ոչ բարդ լինելու պայմաններում հայցվորի կողմից ներկայացված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնագանձման պահանջը ենթակա է բավարարման ողջամիտ համարելով՝ 50,000 ՀՀ դրամ գումարի չափով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 17-րդ, 109-րդ, 179-րդ, 188-189-րդ, 191-192-րդ, 234.12-րդ և 360-րդ, 362-363-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՋԵՐՄԱԷՆԵՐԳՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը բավարարել.

1.1. Անվավեր ճանաչել «ԵՊՀ» հիմնադրամի 06.07.2023 թվականի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-23/24 որոշումը:

2.1. «ԵՊՀ» հիմնադրամից հօգուտ «ՋԵՐՄԱԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերության բռնագանձել

50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, որպես հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

3. «ԵՊՀ» հիմնադրամից հօգուտ «ՋԵՐՄԱԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերության բռնագանձել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

4. Դատարանի՝ 15.09.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկի վրա հասնելը:

5. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա. ՄՈՒՇԵՂՅԱՆ